ՔԱՂՎԱԾՔ
«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորատի՝
2021 թվականի նոյեմբերի 29-ի, ժամը 12:00-ի նիստի
N 7 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- 2019-2020 և 2020-2021 ուսումնական տարիների որոշ դասընթացներից առարկայական տարբերություն հանձնելու մասին հարցը:

Զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Գրիգորյան:

Նշվեց, որ 2019-2020 և 2020-2021 ուսումնական տարիների ընթացքում Covid-19 համավարակով և առցանց ուսուցման գործընթացով պայմանավորված՝ ուսուցման բոլոր ձևերում քննությամբ ավարտվող որոշ դասընթացներ սահմանվել են որպես ստուգարքով ավարտվող: Ներկայում ուսանողի ուսանողական իրավունքների վերականգնման և տեղափոխության ժամանակ լինում են դեպքեր, երբ նախկինում ստուգարքով ավարտվող դասընթացը պետք է դիտարկել որպես քննություն, սակայն ստուգարքի գնահատականն արտահայտված է տառային համարժեքով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-
Գ.Մերդինյանը, Մ.Մովսիսյանը, Գ.Նազարյանը, Վ.Միքայելյանը, Ն.Կեսոյանը, Մ.Բադալյանը, Ս.Խաչիկյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ուսանողի ուսանողական իրավունքների վերականգնման և տեղափոխության դեպքում կրթական ծրագրում ընդգրկված քննությամբ ավարտվող դասընթացը, երբ նախկինում ուսանողը դրանից հանձնել է ստուգարք, չհամարել առարկայական տարբերություն և քննության գնահատականի փոխարեն լրացնել ստուգարքի համապատասխան գնահատականը՝ ուսանողի համաձայնությամբ: Եթե ուսանողը ցանկանում է ավելի բարձր գնահատական, քան ստուգարքինն է, ապա տվյալ դասընթացը համարել առարկայական տարբերություն և ուսանողին թույլատրել հանձնել այդ քննությունը:

Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր՝ **Ա. Գրիգորյան**

Գիտական քարտուղար՝ **Ե. Դարբինյան**

2021 թ. նոյեմբերի 29
Երևան